# Դաս 28.Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների կրոնա-մշակութային համակարգերը

*Եզդիական կրոնում Աստված առաջինը ստեղծել է 7 հրեշտակներին, իսկ Լալըշը նրա ու 7 հրեշտակների հավաքատեղին է ու տունը: Հրեշտակներից առաջինը Աստված ստեղծեց Տաուսե Մալակին, որն իր արարման օրից սկսած փնտրել է Աստծուն, և 40000 տարի անց նա գտել է, և այդ ժամանակ Աստված նրա գլխին է դնում Տաուսի նշանը և նրան կարգում է 7 հրեշտակների հրեշտակապետ կամ փիր: Այս ամենից հետո Աստված ասում է Տաուսե Մալակին, որ մյուս հրեշտակներին ևս բերի իր մոտ: Եվ, երբ բոլոր հրեշտակները հավաքվում են Աստծո մոտ, Աստված նրանց ներկայությամբ ստեղծում է աշխարհը, հետո մարդուն և Տաուսե Մալակին կարգում է Երկիր մոլորակի պահապան և ծաղկման ու զարգացման պատասխանատու» :*



*Սուրբ Լալըշ*